

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

Վլադիմիր Ալեքսանյան

Ամեն օր տարբեր առիթներով հիշատակվող անուն, մատյան, սուրբ գիրք եւ սուրբ խոսքեր պարունակվող հանրագիտակ, ուր մանավանդ վերջին տարիներին արտասահմանում շքեղ հրատարակությամբ լույս տեսնելուց հետո, շատերիս գրադարանների զարդը դարձավ: Այսուհանդերձ, շատ-շատերը հավուր պատշաճին զաղափար չունեն «Աստծո մատյանի» մասին, իսկ ոմանք էլ եթե որոշ գիտելիքներ ու տեղեկություններ ունեն Աստվածաշնչի մասին, ապա դրանք էլ կցկտուր ու անորոշ են: Ուրեմն ի՞նչ է Աստվածաշունչը, ո՞րն է նրա էությունը, բովանդակությունը, ի՞նչ նպատակ է հետապնդել դարեր շարունակ այդ խորհրդավոր, պատկառանք եւ երկյուղածություն արտահայտող կանոնագիրքը: Աստվածաշունչը տարբեր ժամանակներում ստեղծված տարալեզու եւ տարաբնույթ երկերի հավաքածուն է, ժողովված մեր թվարկությունից առաջ 8-րդից մինչեւ մեր թվարկության 2-րդ դարը ընկած ժամանակաշրջանում: Այն պարունակում է հրեական եւ քրիստոնեական կրոնների հիմնական դավանանքը, առասպելները, նրա սկզբունքներն ու կանոնագրերը: Աստվածաշնչի վերաբերյալ գոյություն ունեցող ավանդույթի համաձայն այն գրել են հենց նրանում հանդես եկող մարգարե անձինք եւ աստծո առաք-յալները, որոնք էլ նույն այդ ավանդույթի համաձայն շունչ ու ոգի են տվել արարիչներին, հատկապես՝ այդպես էլ ծագել է Աստվածաշունչ անունը: Աստվածաշունչը բաղկացած է երկու հիմնական մասից՝ Հին կտակարանից՝ կազմված 39 գրքից, որն ընդունում է հրեական, այնպես էլ քրիստոնեական կրոնը եւ Նոր կտակարանը՝ կազմված 27 գրքից, որն ընդունում է միայն քրիստոնեական կրոնը: Հին կտակարանը գրի է առնվել մեր թվարկությունից առաջ 8-2-րդ դարերում հին եբրայերենով: Նոր կտակարանը ավելի ուշ շրջանի արդյունք է՝ ստեղծված մեր թվարկության 1-ին դարի կեսերից մինչեւ 2-րդ դարի վերջերն ընկած ժամանակաշրջանում, գրված հունարենով: Այստեղից էլ պարզ է դառնում, թե ինչու Աստծո այդ երկու մեծ կտակարան-մատյանների բնագրերը պահպանվել են եբրաերենով եւ հունարենով, որոնք հետագայում թարգմանվել են թվով ոչ շատ ժողովուրդների լեզուներով:

Աստվածաշնչի մեջ ընդգրկված գրքերը տարբեր բնույթի են, որով էլ պայմանավորված է նաեւ նրանց բովանդակության այլազանությունը: Դրանք են՝ կրոնաառասպելաբանական վերնագրված Ծնունդ, Ելք, Ղեւտական, Մարգարեությունք, Ավետարանք, Հայտնություն եւ այլն գրական՝ վերնագրված Ելք, Երկրորդումն օրինաց, Դատավորք, Թագավորությանց Ա-Դ, Մնացորդաց Ա-Բ, Մակաբայեցվոց Ա-Գ, Բանք ժողովրդին, Առակք եւ Իմաստություն Սողոմոնի:

Սոցիալ- տնտեսական, իրավական եւ փիլիսոփայական՝ հետևյալ բովանդակությամբ՝ Ելք, Ղեւտական, Թիվք, Առակք իմաստություն, Սողոմոնի, Գիրք Սաղմոսաց, Դավթի, Մարգարեությունք:

Կրոնաբարոյական «Երկրորդումն օրինաց», ընդհանուր կարգախոսով, որի մեջ մտնում են Քրիստոսի տասը պատվիրանները, վերջապես Սիրային-

քնարական՝ «Երգ երգոց» ընդհանուր անվամբ: Աստվածաշնչի կանոնական կոչված դոգմաները ենթակա չեն ոչ ապագայում, ոչ էլ քննական վերլուծության. Դրանք միմիայն ենթակա են հավատի, հետեւապես նրա հետ կապված աստծո, արարչի կամեցողությանը, այսինքն՝ հնազանդություն, համբերություն, ներողա-մըտություն, բարություն, հույս ու հավատ հանդերձյալ կյանքում, վերջապես՝ չարին բռնությամբ չհակառակելու կարգախոսը: Սրան հակառակ Աստվածաշունչը անարգում է բռնությունը, սպանությունը, դատապարտում գողությունը, ուրիշի վաստակի հափշտակումը կամ նրան անօրինական ճանապարհով տեր դառնալը:

Այս ամենը որպես սրբազան պատվիրաններ, նույնիսկ օրենքի վեր ըմբռնումներ, մարդկային հասարակությանը ներարկել եւ կանոնագրել է Աստվածաշունչը, որին էլ այս բոլորի համար, հավատքի եւ մարդկային առաքինությունների հաստատման համար մարդկությունը երկրպագել եւ շարունակում է երկրպագել ու պաշտել Աստծուն եւ նրա Կանոնագիրք-մատյանը՝ Աստվածաշունչը, որը եղել եւ մնում է ամեն մի քրիստոնյա օջախի սեղանի գիրքը:

Հարց է առաջանում, թե ի՞նչ սկզբունքով եւ ինչի՞ց դրված է մարդը հավատում Աստծուն եւ երկրպագում Աստվածաշունչը, երբ նրանց գոյությունը եւ այդ մատյանում վավերագրված դեպքերն ու դեմքերը, այդ թվում նաեւ Քրիստոսը, անիրական, առասպելական ծագում ունեն: Դեռ ավելին. մեզ հայտնի են, որ Աստվածաշնչում նաեւ առկա են բազմաթիվ սխալներ, անիրական ըմբռնումներ, իրական կյանքի նույնիսկ բնության երեւոյթների, նրա զարգացման օրինաչափու-թյունների աղավաղումներ, իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ, հակասական, իրարամերժ գաղափարներ ու տեսակետներ եւ այլն: Դրա հիմնական պատճառը այն է, որ Աստվածաշունչը ստեղծվել է առավելապես մեկ ժողովրդի՝ հրեաների կողմից հորինված ավանդությունների, գրույցների հիման վրա եւ այդպես էլ տարածվել այլ ժողովուրդների մեջ: Այդ է նաեւ պատճառը, որ շատ երկրներում հոգեւորականները, հակասական իրա-դրությունների մեջ գտնվելով շատ հաճախ ստիպված են եղել արգելել ժողովրդին՝ օգտվելու Աստվածաշնչից կամ նրա մեկնա-բանություններից:

Այս ամենով հանդերձ, Աստվածաշունչը ունի թե՛ կրոնաբարոյա-խոսական եւ թե՛ գիտական-մշակութային մեծ արժեք: Նրանում, մասնավորապես Հին կտակարանում տեղեկություններ են տրվում հրեաների եւ, առհասարակ, աշխարհի հնագույն ժողովուրդների վաղ անցյալի պատմության, կենցաղի, սովորությունների, կրոնա-եկեղեցական ծեսերի ու արարողությունների, ժամանակի հոգեւոր, կյանք, ժողովրդի մտածելակերպի եւ այլն մասին: Կարելի է նաեւ նշել, որ Աստվածաշնչի շատ գրքեր ունեն գեղարվեստական արժեք, ինչպես, օրինակ՝ «Գիրք սաղմոսաց Դավթին», «Երգ երգոցը», «Հեզեմատյանը» եւ այլն: Աստվածաշունչը ունի նաեւ այլ առանձնահատկություններ. մեծ է նրա արժեքը հատկապես աղբյուրա-գիտական առումով: Նրանում ամփոփված գրույցները աչքի են ընկնում թեմատիկ բազմազանությամբ: Դրանք հանրային առումով եւս բազմաբնույթ են՝ էպոս, առասպել, առակ, հանելուկ, պոեմ, լեգենդ, քնարական երգ, տարբեր բնույթի ժողովրդական պատումներ ու գրույցներ եւ այլն: Որպես կրոնական հանրագիտական ամբողջական երկ, Աստվածաշունչը նաեւ եղել է գրականության, արվեստի, առհասարակ մշակույթի գործիչների ներշնչանքի աղբյուր: Այդ է պատճառը, որ այն թարգմանվել է աշխարհի գրեթե բոլոր

քաղաքակիրթ ու հնագույն ժողովուրդների կողմից՝ որպես նրա գիտական մտքի առաջադիմության ու իմաստության վավերագիր:

Աստվածաշունչը հայերեն թարգմանվել է 5-րդ դարում, հայոց գրերի գյուտից անմիջապես հետո՝ սկզբնապես ասորականի հիման վրա, այնուհետև այն լնելով թերի ու ոչ լիարժեք, թարգմանությամբ էլ ոչ այնքան հաջող, համեմատվել, լրացվել, սրբագրվել է ըստ հունարեն բնագրի, որի հիման վրա էլ թարգմանվել է Սողոսոնի «Գիրք առակացր»: Այն սկսվում է «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ» խորհրդանշական տողով:

Որպես երեսույթ եւ խիստ անհրաժեշտ ու անհետաձգելի խնդիր, Աստվածաշնչի թարգմանությանը ձեռնամուխ են եղել ժամանակի գիտական այրերը՝ Սահակ Պարթևին ու Մեսրոպ Մաշտոցը եւ նրանց երախտագետ աշակերտներ Եզնիկ Կողբացին, Կորյունը, Հովսեփ Պաղնացին, Հովհան Եկեղեցացին, Գեւորդ Վանանդեցին, որոնց ջանքերը արժանացել են զովասանքի, քանզի Աստվածաշնչի թարգմանությունը նրանց կողմից կատարվել է խնամքով եւ այնպիսի բարձր մակարդակով ու հմտալից, որ հետագա բոլոր ուսումնասիրողները այն համարել են «թագուհի թարգմանությունը»: Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը ժամանակին խրախուսվել եւ գնահատվել է ոչ միայն որպես մշակութային ակնառու երեսույթ, այլև համակողմանիորեն հովանավորվել իբրև պետական նշանակություն ունեցող խոշոր գործ: Աստվածաշնչի հայերեն ձեռագիր տարբերակ-ները պահպանվել են խնամքով եւ սրբորեն. նրա առաջին տպագրությունը իրականացվել է անհամեմատ ուշ: Այն տպագիր վիճակով լույս աշխարհ է եկել մեծ դժվարությունների հաղթահարման գծով՝ 1666-68 թվականներին՝ Ամստերդամում՝ հայ տպագրական գործի մեծ երախտավորներ Ռսկան Երեւեանցու եւ Մատթեոս Ծարեցու ջանքերով՝ ժամանակի առումով դառնալով հայ մշակույթի եւ տպագրական գործի ամենախոշոր երեսույթներից մեկը: Աստվածաշնչի հետագա հրատարակությունները (1805-ին եւ 1860-ին՝ երկուսն էլ Վենետիկում) ավելի կատարյալ են, անթերի եւ ցայսօր մնում են անզերազանցելի:

Դարեր ի վեր Աստվածաշունչը իր գաղափարներով ու սկզբունք-ներով խորապես կապված է եղել հայ մշակույթի, գրականության, պատմության, մեր գիտական մտքերի հետ: Այս առումով ավելի ցայտուն է հայ միջնադարյան հոգեւոր եւ աշխարհիկ մշակույթը, տաղերգությունն ու արվեստի, հատկապես մանրանկարչության բնագավառը: Անմիջականորեն աստվածաշնչային թեմաների մշակում-ներով հանդես են եկել հայ մշակույթի շատ գործիչներ եւ գրողներ: Հայտնի են, օրինակ, Գրիգոր Մագիստրոսի «Հազարատողյանը», Ներսես Շնորհալու «Հիսուսորդին», Հովհաննես Թլկուրանցու «Տաղ Հովհաննու գլխամատյանն», Առաքել Սյունեցու «Ադամագիրքը» եւ «Դրախտագիրքը», Հակոբ Թոխաթեցու «Մաղմոսարանը», Մարտիրոս Դրիմեցու «Ողբ Երեմիա Մարգարեին», գեղարվեստական պատումները, որոնք առանձնակի տեղ են գրավում հայ միջագային պոեզիայում: Դրանցում վերակենդանական Զրիստոսը հայ ժողովուրդի հավատքի ու հույսի ընդվզումով ապրելու ու բարությամբ չարի դեմ պայքարելու խորհրդանիշն է, ներդաշնակ ժամանակի ոչ այնքան դյուրին պայմաններին ու մեր ժողովրդի կորովի ձգտումներին:

Խոսք եղավ նաեւ Աստվածաշնչով ծնված արվեստի մասին, որից անմասն չեն մնացել նաեւ հայ ճարտարապետությունը, քանդակա-գործությունը,

մանրանկարչությունը, գեղանկարչությունը, որոնց անխոնջ մշակները Աստվածաշնչային թեմաներով ստեղծել են բազմաթիվ գործեր, հիանալի պատկերներ: Միջնադարյան ձեռագիր Աստվածաշնչային երկերում ներկայացված են Նոյի, Աբրահամի, Իսահակի, Ռեբեկայի, Եսավի, Հակոբի, Հովսեփի Գեղեցիկի պատկերներն ու Մովսեսի ծովագնացության, Հովհանի, Եզեկիելի տեսիլքի եւ այլ դեմքերի ու դեպքերի պատմության հետ կապված պատկերները:

Հայկական աստվածաշնչային պարգեւներից եւ նկարագար-դրամներից ուշագրավ են Աղցի դամբարանը, Ադրամարի Սուրբ Խաչ եկեղեցու որմնաքանդակներն ու որմնանկարները, Աբրահամի զոհաբերության արարողությունը եւ այլն: Առանձին պատկերներ տեղ են գտել Մաղմուսարանում, Մաշտոցներում եւ Ճաշոցներում: Հայկական հնագույն պատկերներով Աստվածաշունչը Երուսաղեմի մատենա-դարանի թիվ 1925 ձեռագիրն է՝ ընդօրինակված 1269-ին, Երզնկայում: Ձեռագիր 38 մանրանկարներն աչքի են ընկնում յուրահատուկ պատկերագրությամբ, վառ ու նրբերանգ գույներով և առանձնակի տեղ ունեն հայ միջնադարյան գեղանկարչության մեջ:

Դարեր շարունակ Աստվածաշունչը քրիստոնյա ժողովուրդների համար եղել է հույզերի, խոհերի ու զգացմունքների ներշնչարանն ու հավատո հանգանակությունը եւ այդպիսին էլ մնում է այժմ, երբ մանավանդ մեր ժողովուրդի համար քրիստոնեության 1700-ամյակի առիթով սկսվել է բարձրանալ հոգեւոր-մշակութային վերածննդի նոր ու հզոր ալիք, որ կոչված է խորտակելու անցած տասնամյակների հակակրոնական պատմեշը ցրելու մշուշը, որ սքողել էր մեր պատմական քրիստոնեական անցյալը:

The Holy Bible

By: Vladimir Alexanian

Summary

What is the Holy Bible? What is its identity? What are its contents? What are its goals? The author tries to represent short descriptions for these questions.

کتاب مقدس

نوشته ولادیمیر آلکسانیان

چکیده

کتاب مقدس چیست؟ ماهیت و محتوای آن کدام است؟ این اثر نامدار در طول تاریخ

طولانی چه اهداف و رسالتی را دنبال کرده است؟ مولف تلاش می کند به اختصار پاسخ این

پرسش ها را ارائه دهد .